

# ՆԱԽՆԻՆԵՐԻ ԿԱՆՁԸ

## ՊՐՈՄԵԹԵՎՍ

(ըստ Նիկոլայ Կունի)

Երկրի հեռավոր ծայրում մի ամայի և վայրի տեղ կա: Լերկ և **ահարկու** ժայռերն իրենց սուր գագաթներով մխրձվում են ամպերի մեջ: Ժայռերի **ստորոտում** **ահեղամունչ** ծովն է որոտում և իր դառնադի ցայտերը վեր նետում: Հեռու հեռվում սպիտակին են տալիս մշուշով պատված Կովկասյան լեռների ձյունապատ գագաթները: Անուրախ մի վայր է սա, ուր մարդկային ոտք չի դիպել:

Հենց այս անմարդաբնակ ու չարագուշակ վայրը բերեցին շղթայակապ տիտան Պրոմեթևսին: Զևսի հրամանով նրան անխորտակելի շղթաներով պիտի ժայռին **գամեին**:

**Մեղանչել** էր **Պրոմեթևս տիտանը**, չէր ենթարկվել Զևսի հրամանին: Հզոր Պրոմեթևսը գթացել և օգնել էր մարդկանց, նրանց հույս էր ներշնչել, որին մինչ այդ անտեղյակ էին: Ապա մարդկանց համար փախցրել էր աստվածային կրակը, չնայած քաջ գիտեր, որ պատժվելու է դրա համար: Սոսկալի պատժի **երկյուղը** հետ չէր պահել հպարտ և հզոր տիտանին:

Առաջներում մարդիկ չգիտեին, թե ի՞նչ է դեղը, անկարող էին դարմանել հիվանդությունները: Պրոմեթևսը նրանց ցույց էր տվել բուժանյութերի և բուժախոտերի զորությունը, և նրանք հաղթել էին հիվանդությանը: Տիտանը մարդկանց սովորեցրել էր այն ամենը, ինչը թեթևացնում է կյանքը, այն առավել երջանիկ և հրճվալից դարձնում: Հենց դրա համար էլ տիտանը արժանացել էր Զևսի զայրույթին և սոսկալի պատժին:

Դարեր անցան: Սակայն Պրոմեթևսը դեռ **գամված** է ժայռին: Ավելին. նրա տառապանքներն առավել սոսկալի դարձան: Նա թևատարած փռված է ժայռին՝ կապանքներով կաշկանդված ու ժայռին գամված: Արևի կիզիչ ճառագայթներն այրում են նրա մարմինը, փոթորիկներն են սուրում վրայով, ուժահատ մարմինը

մտրակում են անձրեն ու կարկուտը, իսկ ձմռանը **ընդարմացնում** են ձյունն ու սառույցը:

Սակայն այս ամենը դեռ բավական չէ. ամեն օր մի **վիթխարի** արծիվ, իր հզոր թևերով ճեղքելով օդը, սավառնում, իջնում է ժայռի վրա: Կանգնում է Պրոմեթևսի կրծքին և **ծվատում** պողպատի պես սուրսայր իր մագիլներով: Արծիվն իր կեռ կտուցով պատառոտում է տիտանի լյարդը: Հեղեղի պես հորդում է արյունը և **բոսոր** ներկում ապառաժը: Արյունը սևանում և լերդանում է ժայռի ստորոտում: Գիշերվա մեջ վերքերն ապաքինվում են՝ ցերեկը արծվին կեր դառնալու համար:

Ուժասպառ է եղել հզոր տիտանը, բայց տանջանքները չեն բեկել նրա **ըմբոստ** և հպարտ ոգին:

Վերջապես իր թափառումների ընթացքում Պրոմեթևսի մոտ է հասնում հզոր Հերակլեսը: Նա **սոսկունով** է նայում տիտանի տառապանքներին:

Ահա թռավ եկավ նաև արծիվը, որ վերսկսի իր **ժանտ խրախճանք**: Հերակլեսը ձեռքն է առնում իր աղեղը, և նետահար արծիվը **գահավիժում** է փոթորկուն ծովը: Ապա Հերակլեսն իր ծանրագին **գուրգով** փշրում է տիտանի կապանքները: Ոտքի է ելնում Պրոմեթևսը. այժմ նա ազատ է:



## Բառային աշխատանք

1. Լրացրո՞ւ հետևյալ բառերում բաց թողնված անհրաժեշտ երկհնչյունը.

Ման\_կ, խավ\_ր, ս\_նակ, բ\_ր, բ\_ր, հր\_, հեք\_թասաց, ռադ\_կայան, Սերգ\_, հա\_լի, վա\_լուչ:

2. Տրված բառակապակցությունների իմաստն արտահայտի՞ր բառերով, որոնք պարունակեն **ոյ** կամ **յու** երկհնչյունը՝

ա) փայտյա իրեր պատրաստող վարպետ,

բ) աստղերի խումբ,

գ) նավթավառի կամ նավթալամպի մեջ դրվող ժապավեն,

դ) ծառի բնից աճած երկրորդական ոստ:

3. Տեքստում գտիր երկինչյուն ունեցող բոլոր բառերը և դո՛ւրս գրիր:
4. Հետևյալ բառերը գործածիր նախադասությունների մեջ՝ *Նոյ, խոյ, գոյ, մուսիս, արդյոք, յոդ*՝ ընդգծելով երկինչյունները:
5. Տրված տեքստում գտիր երկինչյուն ունեցող բառերը և փորձիր տրամաբանորեն լուծել խնդիրը:

«Nike» ընկերությունն Աֆրիկայում մի խնդրի բախվեց: Աշխատակիցները մարզական կոշիկների մասսայական գողություններ էին անում արտադրության փուլում: Ի՞նչ արեց ընկերությունը, որպեսզի գողությունների քանակը հավասարվի 0-ի՝ ոչ մի ցենստ չծախսելով անվտանգության ու վերահսկողության ծառայությունն ավելի մեծացնելու համար:



### Տեքստային աշխատանք

1. Վնիժ կարդա և պատմիր տեքստի բովանդակությունը:
2. Բնագրում ի՞նչը քեզ դուր եկավ: Պատմիր քո զգացումների մասին:
3. Կարդացած նյութի մեջ տարբերիր և առանձնացրո՛ւ գլխավոր մտքերը երկրորդականից (խմբային աշխատանք):
4. Տեքստը վերաշարադրիր համապատասխան տրամաբանական հերթականությամբ՝ ըստ նախօրոք կազմած պլանի:
5. Տեքստում գտիր հերոսի(ների) բնավորությունը բնութագրող հատվածները:
6. Կերպարների բնութագրման մեջ գտիր սխալ վարքագծի դրսևորումներ և հիմնավորիր:

# ԲԱՂԱՁԱՅՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

## Բ-Պ-Փ

1. Մի շարք դեպքերում բառամիջում և բառավերջում գրվում է **բ**, սակայն թույլ արտասանվում է **փ**.

ա) **բ**-ից հետո, ինչպես՝ **դարբին, երբ, լիբր, խրբուկ** (բույսի անուն՝ վարսակի տեսակներից մեկը), **հարբել, որբ, սուրբ** (սրբել, սրբիչ), **նուրբ, ուրբաթ** (ուրբաթախոս),

բ) **մ**-ից հետո, ինչպես՝ **համբերել, համբույր,**

գ) ձայնավորից հետո, ինչպես՝ **արխազ, իբր, իբրև, խաբել, շաբաթ, հակորուկ** (մորմազգիների ընտանիքին պատկանող բույս):

**Փ** հնչյունը գրվում է **բ** տառով նաև **Գարբիել, Հակոբ, Սերոբ, Քերոբ** հատուկ անուններում:

2. Մի քանի բառերում թույլ արտասանվում է **խպ**, գրվում է **ղբ**, ինչպես՝ **աղբ, աղբյուր, եղբայր, ողբ**:

3. Բառի բոլոր դիրքերում **բ**-ն, **պ**-ն և **փ**-ն արտասանվում են այնպես, ինչպես գրվում են, օրինակ՝ **բորբ, ամբողջ, բամբակ, սերբ, բորբոս, գրաբար, ռումբ, ամպ, ամպրոպ, ապշել, թոպե, պատշգամբ, կողպեք, ձամպրուկ, վիրապ, ամփոփել, արփի, ափսե, խափշիկ, հափշտակել, սփոփել, երփներանգ, ձեփ-ձերմակ, ձամփա, փրփուր** և այլն:



## Առաջադրանքներ

1. Լրացրո՛ւ **բ**, **պ** կամ **փ** տառերը:

Բոր\_ արևն այրում էր երկնքից: Օրն ուր\_աթ էր: Եր\_ ուխտավոր\_ները հաղթահարում էին բարձունքը. հեռվում երևաց Սուր\_ Հակո\_ եկեղեցին: Մի քանի թո\_ե հետո հասան աղ\_յուրին: Ում\_ առ ում\_ սառը ջուր խմեցին լեռան լանջին: Սեր\_ երիտասարդը, որը հայե\_րեն գիտեր, հնայված պատմում էր Հայաստանի ու նրա ժողովրդի մասին: Զ\_ոսաշրջիկներն ա\_շել էին բնության այս գեղեցկությունից

և հաշտակված լսում էին հետաքրքիր գրույցը: Սերերն ու հայերը եղայր ժողովուրդներ են և ունեն հերոսական պատմություններ:

Ճաման երկար չտևեց: Երներանգ ծաղիկներ հավաքելով՝ մարդիկ հասան եկեղեցուն, որի բակը լեփեցուն էր ուխտավորներով:

- Համերությունը կյանք է,- վերջում ասաց Գաբիել քահանան:- Երեք չնեղվեք դժվարություններից: Մենք մի փառք ունենք՝ ապրել խաղաղ ու սրագործված Հայաստանում:

2. Լուծիր խաչբառը: Պատասխանները ուղղահայաց լրացնելու դեպքում կարմիր վանդակներում կկարդաս արև բառի հոմանիշը:

1. Ձուկ որսալու ցանց: 2. Գույն բառի հոմանիշը: 3. Պնակ բառի հոմանիշը: 4. Նյութ, որն օգտագործում են շինարարության և բժշկության մեջ:

1	2	3	4

3. Արմատների միացումով կազմիր նոր բառեր:

*Եղբայր + որդի, սուրբ + պարկեր, նուրբ + գեղմ, նուրբ + երանգ, ուրբաթ + խոս, աղբ + կույր, դափնի + պսակ, որբ + խնամ, ողբ + նվագ, աջ + համբույր, փրփուր + բաշ, մեղմ + ծուփ, արեթ + սունկ, երբ + և + է, Բամբակ + շար:*

4. Գրիր չորսական անուն և ազգանուն, որոնք վերաբերում են *բ-պ-փ* բաղաձայնների ուղղագրությանը:

# ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ ՉԻՄԱՅՈՂԸ ԱՅՍՏԵՂ ՉՄՏՆԻ

Մաթեմատիկան գիտությունների թագուհին է: Հին հույներին հայտնի էր, որ մաթեմատիկայով զբաղվելը սովորեցնում էր ճիշտ և հետևողական մտածել, դատել, նախատեսել տարբեր հնարավորություններ: Ով մանուկ հասակից զբաղվում է մաթեմատիկայով, նա զարգացնում է ուշադրությունը, մարզում իր ուղեղը, իր կամքը, իր մեջ դաստիարակում հաստատականություն ու համառություն՝ դրված նպատակին հասնելու համար:

Հույն փիլիսոփա Պլատոնը այս հատկանիշները համարում էր անհրաժեշտ բոլոր նրանց համար, ովքեր ուզում էին զբաղվել փիլիսոփայությամբ: Պատմում են, որ ուսումնարանի մուտքին նա այսպես էր գրել. «Երկրաչափություն չիմացողը այստեղ չմտնի»:



## Առաջադրանքներ

1. Քո մաթեմատիկայի դասագրքից դնուս գրիր *բ-պ-փ* բաղաձայնների ուղղագրությանն առնչվող տասը բառ՝ բացատրելով ուղղագրությունը:
2. Կարդա՛ Պյութագորասի թևավոր խոսքերը և մեկնաբանի՛ր:
  - ա) Ինչքան էլ կարճ լինեն բառերը, միևնույն է, նրանք պահանջում են ամենալուրջ մտածողություն:
  - բ) Լռի՛ր կամ ասա՛ լռությունից ավելի կարևոր ինչ-որ բան:
  - գ) Մի՛ դատիր անձիդ բարձրության մասին քո սովերով մայրամուտի ժամանակ:
  - դ) Արթնանալով առավոտյան՝ հարցրո՛ւ ինքդ քեզ. «Ի՞նչ պետք է անեն»: Իսկ երեկոյան՝ քնելուց առաջ. «Ի՞նչ արեցի»:
  - ե) Ինչ էլ որ քո մասին մտածեն, արա՛ այն, ինչ մտածում ես, ինչը արդարացի է:
  - զ) Եղի՛ր անտարբեր և՛ քննադատության, և՛ գովեստի հանդեպ:
  - է) Կատակը աղի նման է. այն պետք է չափի մեջ օգտագործել:

ը) Ընկերությունը հենց հավասարությունն է:

թ) Եթե կարող ես լինել արծիվ, մի՛ ձգտիր դառնալ առաջինը  
ագռավների մեջ:

ժ) Գտիր քեզ ընկեր: Դու չես կարող լինել երջանիկ միայնակ:  
Երջանկությունը երկուսի պարզևն է (խմբային աշխատանք):